01/10.5/8243-10

2010-07-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի և Կարեն Ավագյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք։

Միաժամանակ առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2009 թվականի սեպտեմբերի 1-ից հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների նկատմամբ»։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-896-12.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի Հ.Օ-160 օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածի 11-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«11. Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում՝ մինչեւ մայիսի 15-ը ընդհանուր առմամբ 30 օր կամ 180 ժամ եւ ավելի կրթական ծրագրի մասնակցությունից բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ կրթության հաջորդ աստիճան փոխադրելու հարցը կարգավորվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2009 թվականի սեպտեմբերի 1-ից 2010 թվականի մայիսի 15-ը հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնառած սովորողների նկատմամբ։

Հիմնավորում

«Հանրակրթության մասինե օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի առաջադրման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկություն ունենալով կարգավորել եւ վերահսկելի դարձնել աշակերտների բնականոն հաճախելիությունը դպրոց եւ մասնակցությունը կրթական ծրագրին՝ գործող օրենքով սահմանվել է խիստ կոնկրետ եւ միանշանակ լուծում։

Սակայն օրենքի մեկ տարվա կիրառության ընթացքում ստեղծված իրավիճակները ցույց են տալիս, որ դեպքերը եւ պատճառները տարբեր են եւ դրանց միանշանակ վերաբերվելը կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի վրա։

Չմեղմելով հարցը եւ կարեւորելով երեխայի պարտադիր մասնակցությունը դասապրոցեսին, այնուամենայնիվ օրենսդրական նախաձեռնությամբ հնարավորություն է թողնված ստեղծված իրավիճակներում առավել ճկուն լուծուներ տալու համար։